ՄԱՔՍԻՄ ՄԱՆԱՍՅԱՆ

ՀՀ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՀՀ տարաբնակեցման համակարգի և ընդհանրապես հասարակության տարածքային արդյունավետ կազմակերպման տեսանկյունից կարևոր խնդիր է տարաբնակեցման ցանցում տարածաշրջանային կենտրոնների ընտրությունը և դրանց զարգացման հիմնական ուղիների որոշումը:

Տարածաշրջանային կենտրոնները /ՏԿ/ կարևորագույն դեր են խաղում տարաբնակեցման համակարգում/ՏՀ/: Գտնվելով ՀՀ ՏՀ-ի վերին մակարդակներում, նրանք ըստ էության վարչական, տնտեսական և սոցիալական տեսանկյունից կազմակերպում են իրենց ենթակա շրջանները: Նրանց զարգացումը նպաստում է երևանի աճի սահմանափակմանը և կենտրոնացնելով բազմաթիվ գործառույթներ խթանում են տարածաշրջան ների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

ՀՀ-ում մարզերի առանձնացումը և տարածքային կառավարման նոր համակարգի ձևավորումը նպաստավոր պայմաններ և ռեժիմ են ստեղծում տարածաշրջանների համալիր և ամբողջական զարգացման, մարզկենտրոններին տարածաշրջանային նշանակության գործառույթների իրականացման համար:

Հաշվի առնելով ՏԿ-երի առանձնացման փորձը տարբեր երկրներում (1,2) և ՀՀ տարաբնակեցման առանձնահատկությունները, մեր երկրի պայմաններում առավել կարևոր նշանակություն են ստանում հետևյալ գործոններն ու ցուցանիշները. 1/ վարչական կարգավիճակը, 2/ ՏԱԴ-ը, հատկապես կենտրոնական և տրանսպորտային դիրքերը, 3/ տարածքային և ջրային ռեսուրսների առկայությունը,4/ բնակչության թիվը, զբաղվածության բնույթը, 5/ բնակելի ֆոնդի վիճակը, սպասարկման ոլորտի զարգացման

մակարդակը, 6/ քաղաքաստեղծ հիմքում տարածաշրջանային նշանակության օբյեկտների /կրթական, մշակութային, առևտրական և այլն/ առկայությունը:

Վերը նշված ցուցանիշների և տարաբնակեցման համակարգաստեղծ գործոնն թացների վերլուծության հիման վրա ՀՀ ՏՀ-ում առանձնացրել ենք յոթ տարածաշրջանային տարաբնակեցման համակարգեր/ՏՏՀ/ իրենց կենտրոններով: Ընդ որում ՏՏՀ-երի սահմանների առանձնացման ժամանակ առավելագույն չափով հաշվի ենք առել վարչատարածքային միավորների /մարզերի/ և սոցիալ-տնտեսական շրջանների սահմանները (3): Սակայն սխալ է մարզկենտրոնները շփոթել ՏԿ-երի հետ, և բոլոր մարզկենտրոնները համարել ՏԿ-եր: Այսպես, մերձերևանյան տարածաշրջանում գտնվող Աշտարակ, Արտաշատ, Արմավիր և Հրազդան մարզկենտրոնները չեն կարող ՏԿ-եր լինել, քանի որ թույլ են արտահայտված դրանց տարածաշրջանային գործառույթները և տարաբնակեցման համակարգաստեղծ դերը: ՀՀ Արարատյան, Շիրակի և Լոռու տարածաշրջանների կենտրոնների՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, առանձնացումը միանշանակ է, քանի որ դրանք սոցիալ-տնտեսական ներուժով և տարածաշրջանային համակարգաստեղծ գործառույթներով զգալիորեն առաջ են անցել ՏՏՀ այլ քաղաքներից:

ՀՀ լեռնային շրջաններում ՏԿ-երի առանձնացման հարցը որոշակի դժվարությունների հետ է կապված, քանի որ լեռնային խիստ մասնատված մակերևույթի, տրանսպորտային նոսր ցանցի, թույլ յուրացվածության և բնակեցվածության պայմաններում, ըստ էության բացակայում են մեծ և ընդգծված առաջատար քաղաքային կենտրոններ, այլ առկա են միայն մի շարք մրցակից քաղաքներ, որոնք չունեն ՏԿ-երին ներկայացվող բոլոր պահանջները, սակայն ունեն մի շարք բարենպաստ պայմաններ և գործոններ՝ տարածաշրջանային կենտրոն դառնալու համար: Դրանք հիմնականում նախկին շրջկենտրոններն են որոնց քաղաքաստեղծ հիմքում առկա են որոշ կենտրոնական- կազմակերպչական գործառույթներ:

Տավուշի տարածաշրջանում ՏԿ-երի ընտրության հարցը մեր կարծիքով միանշանակ է, թեև այստեղ բացակայում է խոշոր քաղաքային կենտրոնը: Բանն այն է, որ տարածաշրջանի երկու նախկին շրջկենտրոնները՝ Բերդը և Նոյեմբերյանը իրենց թե բնակչության թվով, թե սպասարկման ոլորտի զարգացման

մակարդակով, թե քաղաքաստեղծ հիմքով և թե ՏԱԴ-ով զգալիորեն զիջում են Իջևանին:

Իջևանը թեև չունի տարածական զարգացման մեծ հնարավորություններ, սակայն նրա բարենպաստ ՏԱԴ-ը, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների համեմատական լավ ապահովվածությունը, շրջակայքի ռեկրեացիոն և հանքային հարստությունները նրան դարձնում են տարածաշրջանում անվիճելի առաջատար քաղաքային կենտրոն: Մեր կարծիքով մոտակա 20-25 տարիների ընթացքում միանգամայն իրական է թվում Իջևանի բնակչության թվի աճը մինչև 50 հազարի: Նրա, ինչպես և տարածաշրջանի մնացած քաղաքների հետագա զարգացումը հնարավոր է միայն կառուցապատման խտացման հաշվին: Այստեղ առկա է ռեզերվային տարածքների խիստ սակավություն կապված լանջերի սահքավտանգավորության, գյուղատնտեսական հողերի խիստ թեք լանջերի առկայության հետ: Պետք է նշել, որ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական ներուժը հնարավորությունը չի տա հեռանկարում ստեղծել այլ տարածաշրջաններին համարժեք խոշոր քաղաքային կենտրոն:

Սևանի տարածաշրջանում նախկին հինգ շրջկենտրոններից տարածաշրջանային կենտրոն դառնալու առավել իրական հնարավորություններ ունեն մեր կարծիքով՝ Սևան, Գավառ, Մարտունի և Վարդենիս նախկին շրջկենտրոնները: Թերևս միայն ճամբարակ քաղաքն է, որը իրական նախադրյալներ չունի ՏԿ դառնալու համար:

Անհրաժեշտ է նշել, որ տարածաշրջանի բոլոր քաղաքների զարգացման պայմանները և ռեժիմը գրեթե միանման են: Կապված Սևանա լճի մոտիկության, ռեկրեացիոն գոտու առկայության, արտեզյան ջրերի առկայության և գյուղատնտեսական հողերի առկայության հետ, և բնապահպանական նկատառումներից ելնելով, քաղաքների տարածական զարգացման հնարավորությունները սահմանափակ են:

Մեր կարծիքով, տարածաշրջանային խոշոր քաղաքի ստեղծումը /100 հազ-ից ավելի բնակչությամբ/ այս տարածաշրջանում նպատակահարմար չէ: Ավելի նպատակահարմար է տարածաշրջանի բոլոր քաղաքների համաչափ, համամասնական զարգացումը: Դա են թելադրում տարածաշրջանի թե ար-

տադրական մասնագիտացումը, թե տրանսպորտային և ինժեներական ցանցի գծագրությունը, և թե տարաբնակեցման գծային կառուցվածքային բնույթը, թե Սևանա լճի պահպանության պահանջները:

Այս պայմաններում դժվար խնդիր է դառնում տարածաշրջանային կենտրոնի ընտրության հարցը: Տարածաշրջանի քաղաքներից ամենամարդաշատը Գավառն է /34,3հազ մարդ/, որին հետևում է Սևանը /30,8/ և մեծ տարբերությամբ Վարդենիսը և Մարտունին:

Նշված քաղաքներից Վարդենիսը և Մարտունին, լինելով նախկին շրջկենտրոններ, բավականաչափ մեծ գյուղական շրջանների կենտրոններ են, և կատարում են որոշակի գործառույթներ շրջակա տարածքների նկատմամբ, որը էլ ավելի է կարևորվում նրանց Երևանից ունեցած մեծ հեռավորության և ծայրամասային դիրքի պատճառով: Մարտունի-Եղեգնաձոր և Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ ավտոմայրուղիների ստեղծմամբ նրանց տարածաշրջանային դերը էլ ավելի կմեծանա:

Սակայն ներկայումս նշված քաղաքները չունեն զարգացած քաղաքային միջավայր, ամուր քաղաքաստեղծ հիմք, տարածական զարգացման մեծ հնարավորություններ: Այսինքն փոքր են նրանց հեռանկարային ՏԿ դառնալու իրական հնարավորությունները:

Տարածաշրջանի առավել խոշոր քաղաքները՝ Գավառը և Սևանը թեև իրենց քաղաքաստեղծ հիմքում ունեն խոշոր արտադրական հզորություններ և կատարում են տարածաշրջանային նշանակության որոշակի գործառույթներ, քաղաքային համեմատաբար զարգացած միջավայր, սակայն Սևանի հետագա խոշորացումը և զարգացումը որպես ՏԿ, մեր կարծիքով ,նախընտրելի չէ՝ ելնելով ոչ միայն էկոլոգիական նկատառումներից, այլև ՀՀ տարաբնակեցման հետագա կատարելագործման տեսանկյունից, քանի որ լինելով Երևանից մինչև 2-ժամյա տրանսպորտային մատչելիության սահմաններում և ազդեցության գոտում, նա չի կարող ինքնուրույն տարածաշրջանային կենտրոնկազմակերպչի լիարժեք գործառույթներ իրականացնել: Նրա բնակչության կենսագործունեությունը և բազմաբնույթ կապերը ավելի ինտենսիվ են Երևանի տարածաշրջանի հետ, քան Սևանի /Գեղարքունիքի/:

Մեր կարծիքով առավել նախընտրելի է Գավառի ընտրությունը, հաշվի առ-

նելով ոչ միայն այն հանգամանքը, որ այն տարածաշրջանի առաջին քաղաքն է թե բնակչության թվով և թե հիմնադրման տարեթվով, այսինքն առկա են քաղաքային միջավայրի և ապրելակերպի ձևավորման բավական բարենպաստ նախադրյալներ և փաստացի վիճակ: Որպես նախկին շրջկենտրոն, այն կատարել է կենտրոնական որոշակի գործառույթներ, որոնցից մի մասի գործունեության շրջանակները դուրս էին գալիս նախկին շրջանների սահմաններից դուրս:

Սակայն Գավառի՝ որպես ՏԿ հետագա զարգացումը չպետք է էականորեն փոխի ներկայիս տարաբնակեցման տարածքային կառուցվածքի ընդհանուր գծերը: Այսինքն Գավառը դարձնելով մարզկենտրոն և այնտեղ կենտրոնացնելով մարզային կազմակերպությունները և հիմնարկները՝ չպետք է թույլ տալ նրա անչափ խոշորացումը և զգալի գերակշռությունը տարածաշրջանի այլ քաղաքների նկատմամբ: Միակենտրոն տարաբնակեցման համակարգի ձևավորմանը խոչընդոտում է Սևանա լճի առկայությունը տարածաշրջանում, որը տարածաշրջանային համակարգաստեղծ գործընթացներում ավելի շուտ ունի բաժանողի գործառույթներ, քան միավորողի, համախմբողի:

Այս տարածաշրջանում ուստի հնարավոր և էլ նպատակահարմար չէ միակենտրոն տարաբնակեցման համակարգի ձևավորումը: Մարզային կառույցները կենտրոնացնելով Գավառում անհրաժեշտ է տնտեսական և ոչ տնտեսական բնույթի այլ գործառույթները կենտրոնացնել տարածաշրջանի այլ քաղաքային բնակավայրերում: Ընդ որում դրանց վերաբաշխման ժամանակ պետք է հաշվի առնել տարածաշրջանային առանձնահատկությունները և քաղաքների իրական հնարավորությունները: Մեր կարծիքով ,առավել նախընտրելի են Մարտունի և Վարդենիս քաղաքները:

Ինչպես այս, այնպես էլ որոշ այլ տարածաշրջաններում /Սյունիք, Տավուշ/, նախկին վարչատարածքային բաժանումը շարունակում է զգալի ազդեցություն թողնել մարդկանց տարածաժամանակային գործունեության բնույթի վրա: Նախկին շրջկենտրոնները մարդկանց գիտակցության մեջ շարունակում են պահպանել իրենց կարևոր դերը տարաբնակեցման համակարգում: Եւ ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունները, իրենց տարածաժամանակային գործունեության մեջ ավանդույթի ուժով կողմնորոշվում են դեպի

շրջկենտրոնները: Այստեղ պակաս դեր չի խաղում տեղային «անտագոնիզմը» որն առաջացել է շրջանների գոյության ժամանակ և մարդկային միջհամայնքային ու միջշրջանային հարաբերություններում դեռևս պահպանվում է: Դրա հետ կապված միանշանակորեն չի ընդունվում տարբեր շրջանների բնակչության և համայնքների կողմից Գավառի մարզկենտրոն և որպես դրա հետևանք տարածաշրջանային կենտրոն դառնալու հանգամանքը:

Միանման հիմնախնդիր գոյություն ունի նաև Սյունիքի տարածաշրջանում: Սյունիքի տարածաշրջանի նախկին շրջկենտրոններից առնվազն երեքը հավակնում են տարածաշրջանային կենտրոն լինելու: Դրանցից յուրաքանչյուրը ունի դրան բավարարող և չբավարարող գործոններ ու պայմաններ: Նրանք մեր կողմից բերված առանձին պարամետրերին և ցուցանիշներին համապատասխանում են, մյուսներին՝ ոչ:

Այսպես տարածաշրջանի երեք ամենամեծ քաղաքներն են՝ Կապանը /46,8 հազ բն/, Գորիսը /29,8 հազ բն/,Սիսիանը /19,0 հազ բն/:
Սիսիանի որպես տարածաշրջանային կենտրոնի օգտին են խոսում հետևյալ գործոնները.
ա/ տարածական զարգացման հնարավորություններ /հարավային և արևմտյան ուղղություններով/,
բ/ ջրային պաշարների և շինանյութերի առկայություն,
գ/ շրջակա տարածքի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զգալի ներուժ,
դ/ քաղաքաստեղծ հիմքում շրջակա տարածքների գյուղատնտեսական հումքի օգտագործում:

Հեռանկարում Սիսիան-Քաջարան-Մեղրի ավտոմայրուղու կառուցմամբ Սիսիանի տարածաշրջանային դերը էլ ավելի է մեծանալու:

Սակայն տնտեսական, ժողովրդագրական, քաղաքաշինական սոցիալական բնույթի շատ պարամետրերով Սիսիանը զիջում է թե Կապանին և թե Գորիսին: Այդ իսկ պատճառով էլ տարածաշրջանային խոշոր կենտրոնի մրցակցությունը առավելապես ընթանում է վերջիններիս միջև:

Կապանի հիմնական առավելություններն են բնակչության ավելի մեծ թվաքանակը, տարածաշրջանի ամենախոշոր արդյունաբերական համալիրի առ-

կայությունը, կրթական բարձր ցենզը, քաղաքային զարգացած միջավայրը, տարածաշրջանային որոշ գործառույթների կատարման փորձը, տրանսպորտային բավականին բարենպաստ պայմանները /երկաթուղային կայարան, օդանավակայան և այլն/, գունավոր մետաղների խոշոր հանքավայրերի առկայությունը, որոնք նրան դարձնում են տարածաշրջանային կենտրոնի իրական հավակնորդ:

Սակայն նրա զարգացմանը խոչընդոտող բավականին լուրջ գործոններ կան: Դրանք են՝ տարածական զարգացման համար բավարար չափով ռեզերվային տարածքների բացակայությունը /թեք լանջեր, մետաղային հանքավայրեր, սողանքներ և այլն/, տարածաշրջանի նկատմամբ ծայրամասային դիրքը և շրջակա տարածքների հետ սոցիալ-տնտեսական թույլ կապը:

Սակայն հաշվի առնելով Կապանի և Քաջարանի համընդհանուր տեխնոլոգիական կապը, մեր կարծիքով քաղաքի զարգացման համար կարելի է օգտագործել այդ քաղաքների միջև ընկած տարածքը Գեղի գետի ստորին հոսանքում, Կավճուտ գյուղի շրջակայքում: Մեր կարծիքով Կապան-Քաջարան տրանսպորտային հենքը աստիճանաբար դառնալու է տարածաշրջանային տարաբնակեցման համակարգի հիմնական և տիրապետող կառուցվածքային բաղադրիչը:

Գորիս քաղաքի՝ որպես տարածաշրջանային կենտրոնի նպաստող գործոններն են ջրային և տարածքային պաշարների առկայությունը /հյուսիս-արևմտյան մասում/, տարածաշրջանի նկատմամբ բարենպաստ աշխարհագրական դիրքը, քաղաքային համեմատաբար զարգացած միջավայրը, տարածաշրջանային որոշ գործառույթներ կատարելու փորձը /կրթական, մշակութային, առևտրական և այլն/ շրջակա գյուղերի հետ ավանդական սերտ կապը և այլն: Սակայն նրա թույլ կողմն է տնտեսական ոչ ամուր բազան:

Մեր կարծիքով Սյունիքի տարածաշրջանում, որտեղ առկա են լեռնային կտրտված մակերևույթ, բնակչության նոսր խտություն, տրանսպորտային նոսր ցանց տարածաշրջանային մեկ խոշոր կենտրոնը /50-100հազ բն/ ի վիճակի չէ ամբողջ տարածաշրջանի սահմաններում համախմբող և միավորող գործառույթներ իրականացնել: Այսպես Գորիսի տարածաշրջանային կենտրոնի դեպքում տարածքի մի զգալի մասը Մեղրու և Կապանի ենթաշրջաններում մի

քանի տասնյակ բնակավայրերով դուրս են մնում 2 -ժամյա տրանսպորտային մատչելիության սահմաններից, իսկ Կապանի դեպքում 2 -ժամյա տրանսպորտային մատչելիության գոտուց դուրս են մնում Սիսիանի և Գորիսի ենթաշրջանների տասնյակ բնակավայրեր:

Նման պայմաններում միանգամայն նպատակահարմար է Սյունիքի տարածաշրջանում երկու տարածաշրջանային կենտրոնների առկայությունը իրենց հստակ ազդեցության գոտիներով. Կապանը՝ նախկին Կապանի և Մեղրու շրջանների սահմաններում, Գորիսը՝ նախկին Գորիսի և Սիսիանի շրջանների սահմաններում:

Նշված տարածաշրջանային կենտրոնները ունենալով միջին քաղաքի մեծություն, ի վիճակի կլինեն Երևանից ամենամեծ հեռավորության վրա գտնվող տարածաշրջանում ապահովել բնակչության տարածաժամանակային գործունեության սեզոնցիկլը՝ բացառելով չարդարացված սոցիալ-տնտեսական կապերը Երևանի և այլ տարածաշրջանների հետ:

Ընդ որում բացառիկ և էպիզոդիկ օգտագործման և տարածաշրջանային նշանակության օբյեկտները ցանկալի է ոչ թե կրկնել երկու կենտրոններում էլ, այլև մեկը մյուսին լրացնել, ապահովել դրանց փոխկապակցված զարգացումը:

Ներկայումս Իրանի հետ տնտեսական և քաղաքական կապերի աշխուժացման, Լեռնային Ղարաբաղի հետ ինտեգրացման պայմաններում, մեծանում է տարածաշրջանի դերը ՀՀ տարաբնակեցման համակարգում: Դեպի Իրան և Լեռնային Ղարաբաղ կառուցվող նոր մայրուղիները և հների վերակառուցումը, ինչ խոսք, կդառնան տարածական հենք տարաբնակեցման մեջ համակարգաստեղծ գործընթացների զարգացման համար: Անշուշտ, կփոփոխվի տարաբնակեցման կառուցվածքը, կձևավորվեն տարաբնակեցման հենման նոր կենտրոններ, կստեղծվեն և կվերականգնվեն նոր բնակավայրեր:

Նման պայմաններում հնարավորություն կստեղծվի տարածաշրջանային մակարդակով համակարգաստեղծ գործընթացների զարգացման և մեկ խոշոր տարածաշրջանային կենտրոնի ձևավորման համար:

Վայքի տարածաշրջանային տարաբնակեցման համակարգում /ՏՏՀ/ ՏԿ ընտրության հարցը, մեր կարծիքով մեծ դժվարություն չի ներկայացնում, քանի որ եղեգնաձորի՝ ՏԿ-ի վերածվելու հնարավորությունները ավելի մեծ են,

քան նախկին շրջկենտրոն Վայքի հնարավորությունները:Դա պայմանավորված է և տարածաշրջանի նկատմամբ նրա բարենպաստ աշխարհագրական դիրքով. և տրանսպորտային հարմար պայմաններով: Սակայն սուղ են քաղաքի տարածական զարգացման հնարավորությունները. ինժեներական ցանցի ապահովվածության աստիճանը:

Փաստորեն ամբողջ տարածաշրջանում չկա քիչ թե շատ ձևավորված քաղաքային կենտրոն՝ իր զարգացած քաղաքային միջավայրով: Ջերմուկի գործառութային տիպը/առողջավայր/, ծայրամասային դիրքը աննշան են դարձնում նրա դերը ՏՏՀ-ում: Իսկ նախկին շրջկենտրոններից/Եղեգնաձոր,Վայք/, թերևս Եղեգնաձորը կարող է դառնալ ՏԿ հեռանկարում ունենալով 20-25 հազ բնակչություն: Դա հնարավորություն կտա ապահովելու բնակչության տարածաժամանակային գործունեության սեզոնային ռիթմերը տարածաշրջանի սահմաններում:

Այսպիսով, ՀՀ տարբեր տարածաշրջանների տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների բնույթը և տեմպերը միանգամայն տարբեր են՝ կախված տարածաշրջանների բնական սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից ու պայմաններից: Դրա հետ կապված բնականաբար տարբեր է ՏԿ-երի զարգացման բնույթը:

Եթե երեք տարածաշրջաններում՝/Արարատյան, Շիրակ, Լոռի/ առկա են տարածաշրջանային խոշոր կենտրոններ, որտեղ ապրում է տարածաշրջանի բնակչության զգալի մասը, ապա բնական է, որ անհրաժեշտ է սահմանափակել նրանց աճը, հատկապես էքստենսիվ աճը՝ մտցնելով զարգացման սահմանափակման բավականին խիստ ռեժիմ:

Հանրապետության երկու ամենափոքր տարածաշրջաններում՝ Տավուշ և Վայք, թերևս բացակայում են քաղաքային խոշոր կենտրոնները, սակայն հաշվի առնելով բազմաթիվ գործոնները և պարամետրերը, այստեղ ապագայում նպատակահարմար է որպես ՏԿ-եր ընտրել Իջևանը /Տավուշի/ և Եղեգնաձորը/Վայքի/: Դա հնարավորություն կտա համախմբելու տարածաշրջանի սոցիալ-տնտեսական օրգանիզմը, ապահովելու բնակչության արդյունավետ տարածաժամանակային գործունեությունը: Ցանկալի է նրանց առաջնահերթ զարգացումը տարածաշրջանային այլ բնակավայրերի նկատմամբ:

Միանգամայն այլ բնույթ է կրելու տարաբնակեցման զարգացման ընթացքը Սևանի և Սյունիքի տարածաշրջաններում: Թեև այսօրվա մարզկենտրոնները իրական հնարավորություն ունեն դառնալու ՏԿ-եր, սակայն հաշվի առնելով նշված տարածաշրջանների մեծ ծգվածությունը, մարզկենտրոնների՝ Կապանի և Գավառի բավական վատ տրանսպորտային մատչելիությունը բնակչության համար, այս տարածաշրջաններում նպատակահարմար են դարձնում մարզկենտրոններից բացի, տարածաշրջանային որոշ գործառույթներ տալ այլ քաղաքներին Սևանի տարածաշրջանում՝ Սևան և Մարտունի քաղաքներին, իսկ Սյունիքի տարածաշրջանում՝ Գորիս և Սիսիան քաղաքներին:

Սակայն նրանց տարածաշրջանային գործառույթները չպետք է միմյանց կրկնեն, այլ ավելի շուտ միմյանց լրացնեն: Այս բնակավայրերը ևս պետք է վերածվեն նշված տարածաշրջաններում զարգացման գլխավոր կենտրոններ: Նրանց զարգացումը կնպաստի տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների զարգացմանը տարածաշրջանային համակարգում:

Այսպիսով, ՀՀ նոր վարչատարածքային բաժանմամբ իրական նախադրյալներ ստեղծվեցին տարածաշրջանային կենտրոնների /մարզկենտրոններ/ առանձնացման և դրանց զարգացման համար: Իսկ կենտրոնների ձևավորումը և զարգացումը կարևոր նախադրյալ են տարածաշրջաններում սոցիալ-տնտեսական համախմբման և բնակչության կենսագործունեության արդյունավետ տարածաժամանակային կազմակերպման համար:

Գրականություն

1. Проблемы урбанизации и расселения. М. “Мысль”. 1976г.
2. Проблемы расселения в СССР. М. “Статистика”. 1980г.
3. Վալեսյան Լ.Հ. ՀՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն. Եր., 1988թ.